

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՏԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՆԱԿ

Երկու քիւ մեկ ծառով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԻՍԻԿ



Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԸՄԵՆ ՉՈՐԵԳՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի


Բ. ՀԱՏՈՐԸ

Արտասահմանի ընթերցատէրերու կողմէ այնչափ անհամբերութեամբ սպասուած այս Բ. հատորն կը պարտւնակէ երկսիրտութեան Բ. եւ Գ. մասերը ու կը վերջանայ.

Ա. հատորը (Ա. մաս) կը թաղկանայ 162 է. աներէ. գին 1 Ֆր. Բ. « (Բ. եւ Գ. մաս) « 432 « 2 «

10 օրինակի դրամ դրոշմը 11 օրինակի կը ստանայ. Դիմել ի Բ. Ա. ի Ո. ի Ք. ի խնայարարեան եւ մեր ծանուցած գործակալներուն.

ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ



Անանիսէ կը տեղականայ թէ Բարիքի Վառնայապուհ քահանային Զէյթունի ի նպատակ բացած հանգանակութիւնը 1367, 95 Ֆր. ի հասած է. Լ'արմենի եւս կրմացնէ թէ Տ. Մ. Զիրադի հանգանակութիւնը հասած է 1561 Ֆր. ի :

Ամերիկայ. Եգիպտոս եւ ուրիշ երկրներն նոյնպէս Պուլկարիոյ զանազան քաղաքներ հանգանակուած դրամները զրկուած են իրենց նպատակին ու հետզհետէ ալ կը զրկուին. բայց ցաւ է ըսել թէ Վառնայի Թաղ. Սորհուրդը (եթէ երէք չեղելիք այդ առումը) ալ ծանօթ արգահատելի զոգրին) ղեկ սանդղի մը չէ խրկած Զէյթունի ի նպատակ :

Տեղական մամուլը միաձայն եւ սրտայայտ հրաւերներու վրայ, թաղական ծանօթ զոգրը հազար զօկամակութիւններէ վերջ, հարկադրուեցաւ ինպատակ Զէյթունի հանգանակութեան օկուելու իր որոշումը ասկէ շուրջ երեք ամիս առաջ հրապարակուած ծանուցանել : Մենք կարծեցինք թէ այդ պաշտօնական (?) յանձնարարութենէն անմիջապէս վերջ, հանգանակութեան ձեռնարկելով արգիւնքը պիտի փութայ տեղը դրկել : Բայց մեր ստացած տեղեկութեանց նախով միայն օր մը քանի մը խանութ պտտած ու մաս մը դրամ հաւաքել վերջ ետ քաշուած է, հակառակ ժողովուրդի սիրայօթար մասնակցելու փափաքին : Այսպէս ազիսներէ ի վեր ոչ հանգանակութիւնը կը շարունակուի եւ ոչ հաւաքուած փողերի դումարը կը զրկուի : Սակայն, ծանօթ զոյգին այս խնդրոյ մէջ ցոյց տուած իշական անտարբերութիւնը նպատակաւոր է. ինք

նուզի որ Վառնայի մէջ ու եւ է հանգանակութիւն կատարուի. թերթերու բողոքին վրայ էր որ հարկադրուեցաւ ինքզինք սիրտցաւ ցոյց տալ եւ հանգանակութեան գոյծը իր վրայ առնել, որպէսզի ուրիշները այդ բանին ձեռնամուխ չըլլան եւ իրօք ալ այլուստ հանգանակիչ մասնախումբ մը կազմուի պէտք չըլլաւ, չէ՛ որ թաղականները իրենք յանձնառու եղած էին :

Այժմ կոյրերն իրող տեսնեն եւ խուլերը թող լսեն ու համոզուին թէ թաղական կոչող ծանօթ զոյգը ժողովուրդը խափած է, ծանուցանելով թէ Զէյթունի համար հանգանակութիւն պիտի ընէ ու արդիւնքը դրկէ : Այս որոշապէս կը պարզուի թէ այդ ծանուցումը ըրած էր որպէսզի ժողովուրդի մէջէն ուրիշներ հանգանակութեան չըլլեն. այդ ձեռով թէ ուրիշներու տրեւելը ըլլալ ուզած է եւ թէ ինք չէ հանգանակած ու ինչ որ քանի մը տեղերէ առած է ցարդ չէ զրկած նպատակին : Այսպիսի անխիղճ տաճարականներուն Յիսուս կըսէր :

Ծնունդի իմիջ, դուր ոչ կամիք մեզ. նեղ յարկաւորութիւն Աստուծոյ եւ որոց ուսանենք արգիւնք :

ՈՃԻՐՆԵՐԸ

ԵՒ

ԲԱՆԱԲԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ

(Շար. Անխորդ թիւէն եւ վերջ)

Ինչպէս Հնչակեան միութիւնից առաջացած օգուտը սեփականութիւն չէր միայն Հնչակեանի, այլ բոլորին, բոլոր ազգին միահամուռ, Հնչակեան միութեան խղճովից դալիք վնասն էլ չէր

կարող լինել սեփականութիւն միայն Հնչակեանին, այլ բոլորին, բոլոր ազգին : Թէ՛ մէկ եւ թէ՛ միւս պարագային, ազգութեան բոլոր տարրերը, ոյժերը պէտք է գործէին միեւնոյն ուղղութեամբ, միեւնոյն ցանկութեամբ, միեւնոյն ոգով :

Այդպէս եղաւ : Ոչ բոլորովին, ի հարկ է : Եւ մենք տուեցինք, եւ մենք տուինք զոնքը, որոնք ողբում ենք այժմ :

Ինչիցն է այդ,

— Այդ նրանիցն է, մեր կարծիքով, որ մենք տակաւին պզտիկ ենք յիշափոխական մեծ ասպարէզի վերայ, որ մենք յեղափոխութիւնը միջոց ենք չիւնում, իսկ կուսակցութիւնը՝ նպատակ, որ մենք նախ եւ առաջ կուսակցականներ ենք եւ ապա յեղափոխական, եւ մենք անգիտակից ենք մեր արածներին :

Բայց, թողնենք կրթական եւ անցնինք իրողութիւններին. մենք յետոյ կը դառնանք այդ հարցին :

Հենց սկզբից, երբ պայթեցաւ փոթորիկը Հնչակեան միացած կեղծումի մէջ, երբ կեղծումից դուրս էլ, Կուսակցական մարմինն մէջ երեւեցան պառակտման առաջին նշանները, մենք պարտաւոր զգացինք մեզ, որպէս հայ, որպէս Հնչակեան, միջամտել ինչպիսի, բերել մեր սեփական ոյժն ու կարողութիւնը, դարձնելու համար վտանգաւոր կացութիւնը : Մենք առաջարկեցինք արմատական միջոցներ, որոնց վերայ չենք ուզում կանգ առնել այստեղ, բայց գործադրութեամբ կարծում ենք, կարելի պիտի լինէր լուծել տարաբան եւ միանգամայն առաջին առած լինել արգէն կատարուած չարիքներին :

Տգիտութիւնը, մոլեռանդութիւնը, սովորութիւնը, չարութիւնը, բոլորեքուած կրքերի աստիակութիւնը, յամուրթիւնը, խորամանկութիւնը, առաջին տեսակ ստորին դաւերը, խնայողները, վարկապիկները, փաստիքի աղաւաղումները, նոյնիսկ գուցէ զղուելի խարդախութիւնները, ամբոխային խաւերին յատուկ ծածկամտութիւնը, կեղծիքը, նենգաւոր հաշիւները, ստույգները, մի խօսքով այն բոլորը, որ մարդկութեան բարոյական զարգացման ցուցակն է կազմում, մեզ դէմ ունեցանք մեր ճանապարհի վերայ. այդ սոսկալի ոյժերը անլուծ թողուցին մեր հաշտարար ձայնը եւ մենք, խոստովանում ենք, անյաջող մնացինք մեր առաջին անմիջական քայլերի մէջ :

Արդեօք պէտք է ասել որ մեր ջանքերը բոլորովին ապարդիւն մնացած կ'ըլլին : Այդ ցոյց կուտայ մօտիկ ապագան : Եւ մենք ախտատու ենք, դեռ :

Իսկ այժմ, երբ չարիքը գործուած է երբ եղբոր արեւնը թափուած է հարազատ եղբոր ձեռքով, երբ Հնչակեան ընկերների միջեւ փոխադարձ ատելութեան, փոխադարձ վրէժնորդութեան ոգին սատուիկ լարուած, իրազգային նակետին է հասած, երբ, հետեւաբար, քաղաքային պատերազմը իւր բոլոր արհաւիրքներով ու աննախատեսելի հետեւանքներով բացուած է ազգին մէջ, պէ՛տք է կրկին անշարժ կենալ, պէ՛տք է ձեռքերը ծալած նստիլ ու հանդիսատես լինել տրեւելիք ու ստացուելիք եղբայրասպան ու ազգակործան հարուածներին :

Բայց այդ կ'ըլլէր մի նոր եւ այս անգամ այլեւս անհերքելի ոճիր, գործուած բոլոր հայութեան կողմից : Բայց այդ կ'ըլլէր եւ ամենազօրաւոր ապացոյց ազգային բոլորականի անկման, ազգային բարոյականի անսկզկութեան :

Ոչ, մենք կարծում ենք որ, ինչ էլ լինի մէկի կամ միւսի զգացումը, կարծիքը, տիրող հարցերի նկատմամբ, մի գերագոյն զգացում պէտք է տրեք առանի արտերին, կարծում ենք որ ազգութիւնը ամբողջովին, որպէս մի մարմին, բողոք պիտի բարձրացնէ գործուած կամ գործուող ոճիրների դէմ եւ չպէտք է թոյլ տայ որ քաղաքային անհաշտ, անմիտ, անգիտակից, կոյր պատերազմը ներս մտնելով ազգային յեղափոխական տան մէջ՝ նոր աւերումներ, նոր կոտորածներ ու նոր, անդառնալի գործէ այն տեղ :

Անմիջական պարտականութիւններ դրւում են, որոնք պէտք է անյապաղ եւ անպայման կատարուին :

Հնչակեան ընկերների այն մասը, որ կարող է կարծել թէ սրով եւ բռնութեամբ կը լուծէ, իրա ուզածի պէս, յարուցուած սաղմնապը եւ կը քաջալերէ անհերքելի հրէշային ոճիրները, չարաչար սխալուած կը լինի : Նա գրանով ուղղակի դիմ. ծ կը լինի դէպի անխուսափելի քաղ. քային պատերազմները, որոնցից կը տուժէ ամենամեծ չափերով նախ ինքը եւ ապա ազգն ու յեղափոխական ընդհանուր գործը :

Հնչակեան ընկերների միւս մասը, որ, վարակուելով արուած օրինակից, ինքն էլ կը փորձէ իւրացնել գործունէութեան միեւնոյն մէթօնը եւ կը դիմէ Թալեօնի վտանգաւոր օրէնքին, իւր կողմից գործած կը լինի նոյնպէս մի անհերքելի սխալ, որքան էլ իրաւունք ունենալ կարծէ նրան : Գնալով այդ ճանապարհով, նա ինքն էլ երես առ երես կը հանդիպի նոյն այդ առեւելքաղաքային պատերազմին, որից հարկաւոր է ամեն կերպ խուսափել, — եւ իսկական հայրենասիրութիւնը տարբեր մտածում, տարբեր զգացում չպիտի էլ թելադրէ նրան :

վտանգը տկնիքն ցոյց կուտան ։
Իրաց այս տագնապայի վիճակին մէջ
բնական է որ թէ՛ Պուլիպիտի եւ թէ՛
օտար պետութեանց բռնիքը դիւրեւ
քիչ օրէ որոշուին ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆեբրուարի, 26 Յուլիս

Այսօր կէսօրէն յետոյ ժամը 3 ին
յանկարծ քողաքօ գործեցաւ ռուս-
բի մը ձայնէն։ Պուլիպիտ կիմնադ-
իայի թաղը տան մը մէջ ռուս մը
նետուեր է անձանթ մօրդերէ։
2 կամ 3 հոգի պուլկար մեռած են։
Ղիակներու ցրուած ժառանգն ու-
տիկանները թաղին տուններէն կը
հաւաքէին։ Թաղին տուններու եւ
խանութներուն ապակիները կոտ-
րեցան։ Ամբողջ թաղը շրջապա-
տուած է ռուսականներէ։ Խիստ
խուզարկութիւն կը լինի։ Կը
կարծուի թէ ռուսքը պատահմամբ
(խաթայով) նետուած է եւ ոչ թէ
վնասելու դիտուածով։ Զոհերը 1 աղ-
ջիկ եւ 2 մարդ են պուլկար։ 1
տուն փլած է։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

4. Պոլսէ Յուլիս 28 թուականաւ
Ռեյքըր իմացուցած է հետեւեալը։
«Այլ յիշուի թէ ասկէ քաջի մը
չաբաթ առաջ հայ մը սպաննուե-
ցաւ Քիւրտերէն։ Այս սպաննուողի
քեռորդին կարնոյ թիւրք իշխա-
նութեան կողմէ յետ երկու տար-
ուոյ դատաւարութեան կախող անի
դատաւարտուեցաւ։ Կերելի թէ
նա 1895ի յեղափոխական շարժ-
ման մասնակից եղած էր եւ յաջո-
ղած էր խոյս տալ։ Ընդհանուր
ներումէն օգտուելով կրկին վերա-
դարձած էր։ Բայց նա կրկին կոտ-
կածելի նկատուելով ստիպուեցաւ
լեռներու մէջ ապաստանիլ։
Նահանգին զինուորական հրա-
մանատարը ներում խոստացաւ
իրեն եթէ իր տունը վերադառ-
նար։ այդ խոստումին վատս չելով

չարագործ է, ինչ պէտք է լինի կու-
սակցութիւնը։»
Եւ ահա այսօր ժողովուրդը մոռանում
է, անագուռ է խնկելի յիշատակը
այն քաջ հերոսներին, երիտասարդ
նահատակներին, որոնք չեն խնայել
իրանց կեանքը զոհել, արեւը թափել
ազգի փրկութեան համար, կովիւով
կամ սովամահ լինելով Զէյթունի լեռ-
ներում այն ժամանակ երբ Ա. Նա-
զարէզը քէյֆ էր անում Լոնդոնում
ազգի հաշուով։ Թողնել անպատիժ այդ-
պիսի մարդին, որ ոտնակոխ է անում
զաղափարը, որ իր անձնական ստոր
կրքերին յաղուրդ տալու համար չէ
խղճահարուում արատաւորի կուսակցու-
թեան բարի անունը եւ համբաւը, յու-
սահատութիւն է առաջ բերում ժողո-
վրդի մէջ — անկարելի է։ Հնչական
կուսակցութիւնը, եթէ զեռ գոյու-
թիւն ունի այդպիսի մի կուսակցու-

վերադարձաւ։ Սակայն քիչ օր յե-
տոյ նահանգապետը գանի ձերբա-
կալել տուաւ, չը ճանչնալով զին-
ուորական հրամանատարին խոս-
տումը, հայը շատ չարչարուելէ
վերջ մահուան դատաւարտուեցաւ։
Այս անպատիւի դատաւարտու-
թիւնը սոսկապէս հայերը որոնք
արդէն Քիւրտերու հարստահարու-
թեանց տակ ընկնուած սարսուփի
մէջ մնացած են։

Ի պատասխանի հայ եպիսկոպո-
սին զիտուղութեանց թէ Քիւր-
տերը կը կեղեքեն հայերը, Կար-
նոյ կառավարութիւնը առարկեց
թէ հայերը իրենց անհանգիստ
ընթացքովը իրաց վիճակին պա-
տասխանատու են։

Քիւրտերը ապառնացան յաւա-
կիլ Երիզայի մօտ գտնուող Ռ.
Յովհաննէս վանքին վրայ։

Կարծի թիւրք հիւպատոսը պա-
տասխանատու է մտքերուն այս
գրգռումին, որ Պայազիտի
թիւրք իշխանութեան Հայերը նե-
ղելէն առաջ եկաւ։ Հիւպատոսը
լուր տուեր էր թէ 15000 լաւ
զինուած հայեր պատրաստ են անց-
նել սահմանագիւղերը եւ իրենց
ազգակիցները ապստամբութեան
մղել։ Այս լուրին վրայ խիստ մը
շնչեք ձեռք առնուեցան եւ զրէ
թէ ամէն զինուոր զինուորներով լե-
ցուեցան։ Թէ եւ այդ տեսակ ար-
շաւած մը աւելի չուեցաւ, բայց
եւ այդպէս զինուորները մնացին
զիւղերուն մէջ, ուր հանգիստ կեր-
պով կերան խմեցին զիւղացիներէն
որոնք արդէն ամեն կողմէ հալա-
ծանքի ել թակայ են։
Տիգրանակերտի նահանգին մէջ
զիւղի մը Քիւրտ գալմա գալմին եւ
մի քանի բաղկան զինուորացի մէջ
վէճ մը ծագելով, ոստիկանները
յայժակեցան զիւղին վրայ։ աւա-
րի տունին խեղձը հայու տաներ
եւ բանտարկեցին հայ քահանայ մը
եւ ուրիշ 8 հայեր որոնք եւ ոչ մի
կերպով մասնակից իղած չէին
կռուին։ Գիւղին Քիւրտ բնակիչ-
ները փախան եւր ոստիկանները
խուզարկութեան սկսեցին։ Բայց
Քիւրտերու տունները աւարի չը
տրուեցան։

Թիւրք, բարոյապէս, իրաւադիտապէս
պարտաւոր է պատժել յանցաւորին,
առանց մեղմացուցիչ հանգամանքներ
արտադրել իր դատաւարութիւնը եւ իրա-
գործել որքան էլ խիստ լինի պատիժը
եւ գրանդով վերականգնել իր համբաւը
Թող Նազարէզը արդարաւայ անաչառ
դատարանի առաջ իր գործած անազնիւ
անարարական վարմունքներէ մէջ,
Թողնել յանձաւորին անպատիժ, կը
նշանակէ մեղաւորի լինիլ նրան։ Եւ
մենք որ եւ է կապ, անհաշիւ ինչ
չենք ունեցնել Հնչական կուսակցու-
թեան հետ, ալ միայն լրագրութեան
միջոցով հետեւել ենք նրա գործունէ-
ութեան, կարող ենք հաւատացնել
որ ամենեւեալ գործունէութեան եղա-
նակը գնում, վատաբերի արարքներն
դատաւարմին է լինակութիւն եւ
մաքրասիրութիւնն է։

Հ. Առաքիլեան

ԱԶԳԱՅԻՆ

ԶՄԻՒՌՆԻՈՅ Առաջն. Տ. Միւլթի-
սեպեկ արքեպիսկոպոսի վախճանման
առթիւ Պոլսոյ իմասն ժողովը վերջին
նիստին մէջ իր խորին վիշտը արձա-
նագրելէ անմիջապէս յետոյ, նկատե-
լով որ Զմիւռնիոյ կարեւոր վիճակը
չի կրնար թափուր թողուիլ երկար
ատեն, որոշեց ընտրութեան հրահանգ
ղէկել եւ հռոմուն ցանկ մը պատ-
րաստելով՝ ընտրելի նշանակեց Մես-
րոպ Սուքիասեան եւ Բարթողիմէոս
չարքեպիսկոպոսները ու Տ. Հմայակ
եպսկ. Դիմաքսեանը։

ՊԵՆՏԻԿՐ Առաջնորդ Տ. Մովսէս
եպսկ. Կէօմրիւքեան՝ որ Կիրիկիոյ
կաթողիկոսին ընտրութեան առթիւ
պատրիարքարանի կողմէ պատուիրակ
դացած էր ու ժամանակէ մը իվեր
Պոլսոյ կը գտնուէր Պելէճիկէ իր ղեմ
դժգոհութիւններ յայտնուած ըլլալուն
պատճառաւ, այժմ իմասն ժողովոյ ո-
րոշման եւ իր վիճակին Գաւտո. ժո-
ղովոյն խնդրանաց համեմատ իր ա-
ռաջնորդական ակնարկ վերա-
դառնայ։

ՀԱՆԳՈՒՑԱԿԱՆ ՄԵԼՔԻՍԵՔԻ արքե-
պիսկոպոսի կտակը Զմիւռնիոյ Գաւառ.
վարչութիւնը բանալով գտած է 2000
ոսկիի մօտ հարստութիւն մը. այս
գումարի 1400 օսմ. ոսկին, ինչպէս
ասկէ առաջ գրած էինք, Տ. Աղէք.
Մանթաշեանի դրամատան յանձնուած
է եղեր։ Հանգուցեալը կը կտակէ 200
ոսկի քրթը, 200 եղբորը գումակնե-
րուն, 250 Եփրէմ եղբորը, 50 ոսկի
չիրի մը կառուցանելու, 100 ոսկի
կառակաւորութեան որ Աւեսաբուն
գնեն եւ կարօտ գաղութներու եւ եկե-
ղեցիներէ բաժնեն։ 100 ոսկի կը
յատկացնէ Երեւանի միջին սան-
թիւնի մէջ ժամանակաւ իր գրած
յօդուածները գրել մը ձեւ ապագրե-
լու, մրցու. արդիւնքը յատկանայ
Զմիւռնիոյ Որդանոցին։ Իսկ մնաց-
եալ 500 ոսկին կառաւարկէ անգլ.
պետական պանզան շահու գնել եւ տա-
լեկան տոկոսովը ծփոխի Ներսէսեան
վարժարանի մէջ իր կարօտ աղքա-
կաններէ միայն զաւակը կրթել։ Նաեւ
մասնաւոր երկու ցուցակներու համե-
մատ թողուցած 4-5 հարիւր ոսկի ար-
ժողութեամբ գոյքերուն եւ պոստի-
ներուն մէջ կարեւոր մասը տեղւոյն
ազգ. անտուկին կը կտակէ, որպէսզի
ամեն տարի անոր տոկոսն յատկաց-
ուի Հոփիւրմեան վարժարանի յառա-
ջողմ աշակերտութեան մրցանակա-
բաշխութեան, Մուրաքեան մրցանակ
անուամբ։ Մնացեալ գումարին 25
ոսկին կը կտակէ հանգուցեալ Մատ-
թէոս Մամուրեանի արձանի շինու-
թեան, 25 ոսկի Կ. Նաւասարդեանի
աղջիկին՝ Բուս. 12 ոսկի Ներսէսեան
որդանոցին եւ 15 ոսկի Ս. Լուսաւորի
Հիւանդանոցին։ Իսկ առանցմէ դուրս
ինչ որ աւելնայ կրկին կը նուիրէ
Եփրէմ եղբորը։ Նաեւ 55 ոսկինոց ա-
ղամանդեայ մատանին կտակած է Ս.
Էլմիածնի թանգարանին։

ՊԻՒԼԿԱՐԱԶԱՅՈՅ մէջ օրինակի
նորութիւն մըն էր որ անցեալ տարի
մտցուց Ռուսները պատ. Հոգաբար.
ձուրիւնը, սեփարակի մը ձեւով հրա-
տարակելով իր հսկողութեան ու խո-
նարակի տակ գտնուող տեղւոյն ազգ.
վարժարանաց տարեկան տեղեկագիրը
Անցեալ 1602-1903 չըլած ի տե-
ղեկագիրը եւս այսօր ստացանք որ կը
պատկերացնէ Ռուսներէ Ս. Մեսրոպ-
եան եւ Ս. Հոփիւրմեանց ազգ. երկ-

սեռ վարժարանաց բարոյական եւ
նիւթական վիճակը իր ամէն կողմե-
րով։ Հոն կը տեսնենք թէ այդ հաս-
տատութիւնները տարեշրջանին մէջ
բնեցած են 93 աշակերտ, 74 աշա-
կերտուհի, 7 ուսուցիչ եւ 2 ուսուց-
չուհի։

Եռամսայ շրջանին մէջ Մեքրոպեան
վարժարանը 12 շրջան ուսարտ ունեցած
է։

Եօթը հազար ֆրանքի մօտ պիւտ-
ճէ մը նախատեսուած է եւ գրեթէ ճշդ-
դուրեւամբ գործադրուած։ Հոգաբար-
ձութեան գիտաւոր հասոյթները եղած
են

Քր.	
Թաղ. խորհուրդէ	2240
Պարահանդէսէ	671
Եւրոպա ծախուած վիճա-	
կահանութեան ոտմսերէ	1686
Գաղութական տուրքէ	1501
Աշակերտներէ սոմաթո-	
շակ	1396.60
Գանձանակէ	168.60
Նուիրատուութենէ	307.85
Մաց տուրքէ	77.50

Վաճառականական վարժարան
մը Մանչեսթրի մէջ. — Մանչեսթ.
րէն մեզի կը հաղորդեն թէ այդ
քաղաքին համալսարանը որոշած
ըլլալով վաճառականական ֆոքիւ-
թէ մը հաստատել. դիմում ըրած
է քաղաքին բնակիչներուն որ տա-
ւը տարուան համար տարեկան
1500 ոսկիի նուիրատուութեամբ մը
բժակցին այդ հիմնարկութեան.
տեղ ոյն ժամով վաճառականներէն
Պ. Գ. Ֆիտզլեան, որ Մանչեսթրի
Համալսարանին Օւրբնա ֆոքեթի
նախկին շրջանաւարտներէն մին է,
գեղեցիկ եւ ուշիմ գաղափարն ու-
նեցած է հրահրելու Մանչեսթրի
հայ գաղութը՝ մասնակցել այդ
հանգստակութեան, իր կողմն
լսելի չէ մնացած տեղւոյն հայ
վաճառականներն արդէն որոշած
են տարեկան 100 ոսկի հայ գաւ-
ղութին կողմէ իբր նուէր յատ.
կացնել այդ վաճառականական
վարժարանին հիմնարկութեան նը-
պաստելու, Հոճոյքով կարձանա-
գրենք այս որոշումը, որով Ման-
չեսթրի հայ գաղութը կապացու-
ցանէ թէ գիտէ իր երախտագի-
տութիւնը յայտնել այն մեծ օ-
գուտներուն համար զոր քաղած է
այդ քաղաքին ազատ հիւրընկա-
լութենէն։ Այդ վաճառականական
ֆ. քիւթէն արդէն կ'որոշէ ուղ-
ղակի օգտակար ըլլալ հայ երիտա-
սարգութեան. անկից շրջանաւարտ
ելող հայ երիտասաղ զինեւր ազա-
հոյակաւ գործ պլտի գտնեն անգ-
լիական կամ հայ վաճառականա-
կան մօտ տուններու մէջ, եւ կամ
եթէ անձնական հարստութիւն ու-
նին՝ աւելի լայն ու գլխավոր ա-
ռելաւորական գործունէութիւն մը
պիտի կրկնեն անհաւարկել, վա-
ճառականական գլխութեան բոլոր
ծանօթութիւնները իր քաղաքացի
ըլլալով։

Անանիս

